Նար, Ծովինար

Նար դիցուհին նոյնպէս կը կապուի ջուրի եւ պտղաբերութեան հետ: Ան մանաւանդ անձրեւաբեր է եւ ժողովուրդը երաշտի ժամանակ անոր կը դիմեր անձրեւ խնդրելով: Նարի պաշտամունքի այդ ծէսերէն մէկը աղօտ ձեւով հասած էր մինչեւ մեր օրերը: Այդ կ՛արտայայտուէր Նուրինի պաշտամունքով: Գիւղերուն մէջ, ամրան տաքին, երբ երաշտի վտանգ ըլլար, գիւղացի կիներ փայտէ պուպրիկ կը շինէին, կը հագուեցնէին կնոջ պէս, կու տային մանուկներու ձեռքը, որոնք զայն առնելով խումբով կը շրջէին տունէ տուն եւ կ՛երգէին համապատասխան երգը,որ շատ տարբերակներ ունեցած է: Տանտիկինները զանազան ուտելիքներ կու տային եւ ջուր կը թափէին Նուրինի վրայ: Երգի տարբերակներէն մէկը.

Նուրին-Նուրին եկել ա,
Աճպա հուրին եկել ա,
Շիլա շապիկ հագել ա,
Կարմիր գօտիկ կապել ա,
Ձու բերէք թաթը դնենք,
Եղ բերէք պորտը քսենք,
Ջուր բերէք գլխին ածենք,
Երկնքի դուռը բացենք:

Երգին մէջ յստակօրէն արտայատուած է Նուրինի դերը որպէս «երկնքի դուռը բացող», անձրեւ պարգեւով:
Միաժամանակ ան նաեւ «հուրի» է, որ պատահական չէ: Նուրինի մէկ տարբերակն է Նար կամ Ծովինար անունը, ուր կը կապուի անձրեւի ու որոտի հետ: Անձրեւէն առաջ հեռաւոր որոտումի փայլատակումը ժողովուրդը մինչեւ օրս ալ (կարգ մը տեղեր) Ծովինար կը կոչէ: Ան է, որ կը պատռէ ամպերը եւ անձրեւ կը հոսեցնէ:
Քանի որ ջուրի եւ կրակի տարրերը առասպելներու մէջ ընդհանրապէս իրարու կապուած կը գտնուին, այն առասպելական էակը (Նար, Ծովինար), որ կրակով երկինքը կը պատռտէ ու անձրեւ կը տեղացնէ- կոչուած է նաեւ «հրայք-ծովեան»:
Յիշուած աստուածներէն բացի հայերը ունեցած են նաեւ այլ

պաշտամունքներ, որոնք նախորդած են աստուածներու պաշտամունքին, ինչպէս՝ երկնային մարմիններ՝ Արեւ, լուսին, աստղեր, բնական երեւոյթներ՝ ջուր, ժամանակ, անտառ, կարգ մը ծառեր, նաեւ առասպելական էակներ՝ դեւեր, քաջքեր, յարալէզներ: Այս ամէնուն յիշատակները առատօրէն պահպանուած են ժողովրդական ստեղծագործութիւններու՝ հեքեաթներու, առասպելներու եւ դիւցազնավէպներու մէջ:
Հայաստանի մէջ յատկապէս տարածուած եղած է ջուրի պաշտամունքը: Ջուրի պաշտամունքը ունեցած են գրեթէ բոլոր ժողովուրդները: Յունական դիցաբանութեան մէջ ան արտայատուած է բազմաթիւ ձեւերով: Սուրբ նկատուած էր ստորգետնեայ Ստիւքս գետը եւ կենարար յատկութիւն ունէր: Հերոս Աքիլլէսի մայրը՝ ծովու դիցուհի Թէտիս, իր մանուկ զաւակը անմահացնելու համար, երկու մատով բռնելով անոր գարշապարէն, զայն կը թաթխէ Ստիւքսի մէջ: Սակայն մօր մատներու տեղերը կը մնան խոցելի: Հայկական դիւցազնավպէի գրեթէ բոլոր գլխաւոր հերոսները կ՛առնչուին ջուրին: Ջուրի պաշտամունքի աւելի վաղ շրջանի հետքեր կան Հայաստանի մէջ: Արագածի, Գեղամայ Լեռներու վրայ գտնուած են վիշապներու հսկայական անձաններ, որոնք նախապէս եղած են ջուրի հովանաւոր: Անոնց պաշտամունքը կը կապուէր ոռոգման հետ եւ արձանները կը դրուէին լեռնային ջրամբարներու քովերը:
*Հնագոյն պաշտամունքի վայրերը՝ տաճարները կոչուած են մեհեան: Եղած է նաեւ բագին բառը, որ աւելի ուշ ստացած է միայն զոհասեղան իմաստը:

Հայկական էպոսի հնագոյն ակունքները

Վահէ Անթանեսյան՝ «Նար»

Հայաստանի բնությունը գունեղ ու բազմազան է, հայն իր բնույթով փոթորկուն է, և բնականաբար, մեր նախնիները պետք է ունենային բնական տարերքի, ծովերի, ամպրոպի, փայլակի, անձրևի հովանավոր դիցուհի՝ Ծովինար, որ հայ դիցաբանության մեջ հանդես է գալիս նաև Ծովյան, Նար, Նուրի, Հուրի անուններով: Ծովինարը հրեղեն էակ է, ցասումնալից կին: Մինչ օրս ամպրոպի ժամանակ հայոց գյուղերում ասում են՝ Ծովյանն է պտտում... Հավանաբար, նա

հայոց մեջ հանդես է եկել նաև եռաժանիով, ինչպես հունական Պոսեյդոնը, Ծովինար աստվածուհին ամեն անգամ, երբ խառնել է երկինքը՝ որոտ, կայծակ, փոթորիկ է տեղացել երկրի վրա: Հայոց ավանդություններում Ծովերի տիրուհին հաճախ հանդես է գալիս նաև հրեղեն ձիուն հեծած: Համաձայն մեկ այլ ավանդության՝ Ծովինարը երկնքի քմահաճ տիրուհին էր, սիրում էր ամպերի հետ մատներով խաղալ՝ երկրի վրա մե՛կ բարեբեր անձրև, մե՛կ ավերիչ փոթորիկ առաջացնելով: Սակայն միշտ չէ, որ Ծովինարը ցասում է արտահայտել: Նա նաև կենարար անձրևի հովանավոր աստվածուհին է, և մեր նախնիներն ամեն անգամ անձրևի ժամանակ փառաբանել են Ծովինար աստվածուհուն: Ջրի պաշտամունքի հետ կապված՝ Հայաստանում երկու դիցերի են պաշտել: Սիրո և գեղեցկության աստվածուհին՝ Աստղիկը, կենարար ջրի, աղբյուրների հովանավորն է: Նրա պաշտամունքին առնչվող տարրեր են նաև աղբյուրների ակունքների մոտ դրված վիշապաքարերը: Իսկ Ծովինարը անձրևների ու ծովերի տիրուհին էր: Այնուամենայնիվ, Ծովինարի պաշտամունքում էլ դեր ունեին վիշապները: Երբ երկնի տիրուհին խառնում է ամպերը և կայծակ առաջացնում, դրանից անհանգստանում և վախենում են երկնքի վիշապները և ոռնալով ցած իջնում երկիր, այնտեղ որոտում, բարձր գոչում, աղաղակում, և նրանց կատաղությունից փոթորկվում են ծովերը: Այդժամ վիշապների դեմ մարտի է բռնվում քաջ ու անպարտելի Վահագն Վիշապաքաղը: Այս պատումը տարածված է եղել հատկապես Վասպուրականում, Մոկսում՝ Վանա լճի շրջանում բնակվող հայերի մոտ: Եվ երբ փոթորկվել է Վանա լիճը, մեր նախնիք հավատացել են, թե այնտեղ Վահագն է գոտեմարտի բռնվել վիշապների հետ: Ծովինարին նվիրված շատ ծեսեր են եղել, որոնք հայերը, չնայած եկեղեցու արգելքին, պահպանել ու կատարել են մինչև XX դարի երկրորդ կեսը: Ծովինարին նվիրված ծես էր Նուրի-Նուրի խաղը: Քանի որ քրիստոնեության մուտքից հետո հին աստվածներին նվիրված ծեսերն արգելվեցին, ժողովուրդը հին աստվածների պաշտամունքը պահպանեց կենցաղային իրերի, տիկնիկների ձևով: Ծովինար-Նուրին պատկերված է որպես տիկնիկ, որի աչքերից կաթիլներ են թափվում: Նուրին անձրևի հովանավոր աստվածուհին էր, ուստի

երաշտի ժամանակ գյուղացիները Նուրի տիկնիկի հետ շրջում էին տնետուն, որպեսզի նա անձրև պարգևի մարդկանց: Նուրիի շապիկը լուսակերտ էր ու նկարազարդ, իսկ մեջքի գոտին՝ ծիածանակերպ: Նուրիի ծիսակատարությունը տարածված էր Հայաստանի շատ գավառներում: Երաշտի ժամանակ Լոռիում խաչքար էին զցում ջուրը, թաց խոտ էին այրում և սկսում Նուրիի ծեսը: Երեխաները Նուրի տիկնիկը ձեռքին շրջում էին տնետուն, փողոցներում ու երգում. -Նուրի-Նուրին էկել ա, Շիլա-շաբիք հագել ա, Կարմիր գոտին կապել ա, Ջու բերեք թաթին դնենք, Եղ բերենք՝ սրտին քսենք... Սրտին քսել՝ նշանակում է սիրաշահել: Կա երգի այլ տարբերակ ևս. -Նուրի-Նուրին էկել ա, Դուռն ի դռան կանգնել ա, Շալե շաբիք հագել ա, Կեշմե գոտիք կապել ա, Ջու բերեք, թաթը դնենք, Եղ բերեք՝ վարսը քսենք, Ջուր բերեք՝ գլխին ածենք, Աստուծանե ցող թող գա, Գետնիցը՝ պտուղ դուս գա... Երաշտի ժամանակ հայոց գյուղերում երեխաների խմբերը գյուղում շրջում էին՝ Ծովինարին խորհրդանշող տիկնիկը պահած թափորի առջևում, և ամեն ոք, դիմավորելով թափորը, ինչ-որ բան էր նվիրաբերում՝ սնունդ, փող, խմիչք: Վերջում հավաքված համայնական միջոցներով որևէ աղբյուրի մոտ զոհաբերություն էր մատուցվում, և ողջ համայնքով հավաքվում էին խրախճանքի: Ծովինարին է նվիրված նաև ջուր ծեծելու կամ ջուր վարելու սովորույթը, երբ երաշտի ժամանակ համայնքի կանայք հավաքվում էին մոտակա լճակի կամ գետի ափին, ջուրը մտնում և ձեռքերով ջուրը վարում կամ ճիպոտներով ջուր ծեծում, որպեսզի Ծովինարն անձրև պարգևի: Նման մի հետաքրքիր ծես նկարագրել է անվանի հայ գրող Վախթանգ Անանյանն իր «Սևանի ափին» վեպում: Ծովինար-Նուրիին նվիրված տոնը հայերը Ծաղկազարդին են տոնում, ուստի կարելի է հետևություն անել, որ Ծաղկազարդը նվիրված էր հենց Ծովինար աստվածուհուն: Ծովինար-Նուրիին վերաբերող այս երգը՝ գրառված Լոռվա ձորում, այլ բան էլ է հուշում. Ջու բերեք, թաթը դնենք, Եղ բերեք՝ վարսը քսենք... Ծաղկազարդը հայ առաքելական եկեղեցին տոնում է Մեծ պահքի ժամանակաշրջանում: Մինչդեռ այս տոնի ծիսական խոհանոցն ամենևին էլ պասուց չէ: Հետևաբար, կարելի է ասել, որ նախաքրիստոնեական Հայաստանում պահք, որպես այդպիսին, չի եղել: Դրա անհրաժեշտությունն ուղղակի չկար:

Իսկ Ծովինարին նվիրված գլխավոր տոնակատարությունը պետք էր հենց Ծաղկազարդին տոնել, քանզի գարնանային ցանքսի շրջանն է և կենարար անձրևների ամենաանհրաժեշտ ժամանակաշրջանը: Ինչ վերաբերում է Նուրիի տոնի ժամանակ խաչքարը ջուրը գցելուն, գուցե դա տուրք է հին ու նոր կրոնների միջև պայքարի հիշողությանը, գուցե՝ սոսկ ծես, որ ձևավորվել է հեթանոսության ու քրիստոնեության սինթեզով: Ծովինարի կերպարն արտացոլված է նաև հայոց ազգային էպոսում՝ «Սասնա ծռերում»: Նա Սասնա դյուցազուն նահապետների՝ Սանասարի և Բաղդասարի մայրն է: Ի դեպ, էպոսում Ծովինարը հղանում է առանց կենակցման ակտի, ջրից՝ կախարդական աղբյուրից մի բուռ ջուր խմելով: Հայոց էպոսի հիմքում փաստորեն հենց Ծովինարն է, որ առանց տղամարդու, ջրից հղանալով, ծնում է Արարատի երկրի երկու հսկաներին՝ Սանասարին և Բաղդասարին՝ Մեծ Սարին և Փոքր Սարին (Մեծ ու Փոքր Մասիսները): Գուցե մեր էպոսի հիմքում աշխարհաստեղծման, արարման գաղափա՞րն է սույնով դրված: Ի դեպ, Ծովինարի պաշտամունքը տարածված է եղել նաև հայերի շատ դրկիցների մոտ: Շումերական, խուռռիական շատ ավանդույթներում նույնպես նախամայր ու նախաստեղծ աստվածությունը կոչվել է Ծով, ինչը, անտարակույս, Ծովինարի պաշտամունքի ազդեցությամբ է ձևավորվել: Այն, որ Ծովինարի պաշտամունքը երբեմն նույնացվել կամ նմանեցվել է Անահիտի՝ Մեծ Մոր կամ Մայր դիցուհու պաշտամունքին, վկայված է նաև Խորենացու շնորհիվ մեզ հասած Վահագնի ծնունդի պատումում: Չէ՞ որ Վահագն ռազմաստվածը ծնվում է Ծիրանի ծովից՝ երկնի անհունից՝ տիեզերական անսահմանությունից: Տվյալ դեպքում, եթե Մայր դիցուհու՝ Անահիտի պաշտամունքն առնչվում է կենսաբանական ծնունդին, ապա Ծովինարը տիեզերական ծնունդի խորհուրդն է ամփոփում, անարու, չգոյից ծնունդի, որը հետագայում փոխ առավ նաև քրիստոնեությունը. Չէ՞ որ, համաձայն քրիստոնյա-եբրայական ավանդության, Մարիամն էլ հղացավ Հիսուսով առանց տղամարդու հետ կենակցման ակտի, սուրբ հոգուց: Եվ Ծովինարը ոչ միայն երկրային ջրերի՝ ծովերի տիրակալն էր, այլև Ծով-Ծիրանիի՝ տիեզերքի և անհունի:

Ջրի պաշտամունքը և ժողովրդական հավատալիքների արտացոլումը Ներատուս տեղանվան մեջ

Հայկական հեթանոսական կենցաղում գոյություն է ունեցել **Nar** *անունով ջրի, ջրային տարերքի և անձրևի աստվածություն*: Ա նմիջական տվյալները քիչ են պահպանվել: Դրանցից մեկն է **Ծովինարը**՝ *«կայծակ»* նշանակությամբ, որն օգտագործվում է որպես կնոջ հատուկ անուն (Լոռու և Շուլավերի բարբառներում նշանակում է «կայծակ») : Գոյություն ունի այդ բառի մեկ այլ ձև՝ ***ծովիան,*** որն ըստ Գ. Ղափանցյանի՝ «*ճիշտ կլիներ գրել* covi(cov *սեռ. ծովի)* + *անհասկանալի* «an»(= *ոգի, աստվածություն*): *Վերջին ձևն օգտագործվում է Ղազախի հայերի մոտ: Համեմատության համար հետազոտողը բերում է Սանասարի և Բաղդասարի մոր* Covinar *կամ* Covial *(բառացի՝ «ծովի աստված») անունը՝ նշելով, որ այդ եզակի անունը լսել է հայագետ Մ. Աբեղյանը Բաշապարանի հայերի մոտ*[1]*:*

Գ.Ղափանցյանը քիչ հավանական է համարում, որ Covial *անունը* covian-*ի հնչունափոխված ձևն է, որովհետև* al-*ը աստվածություն է (*covi-al-*ի մեջ՝ «ծովի աստվածություն»)*[2] : Հետաքրքրական է այն դիտարկումը, որ Նոր Նախիջևանի հայերի մոտ ծովի մար նշանակում է *«ջրերում բնակվող չար ոգի»*: Գ.Ղափանցյանի համոզմամբ՝ Նոր Նախիջևանյան **covi-mar** *«ջրի ոգի»* (բառացի՝ *ծովի ոգի, ծովային ոգի)*, Լոռիի **covinar** *«կայծակ»* և **Covinar** հատուկ անունը նույն անվանումն է և էակը: Առաջին դեպքում **nar-ը** ձևափոխվել է **mar**-ի՝ կեղծ ստուգաբանության ազդեցությամբ՝ Այսինքն՝ covi mar «ծովի մայր» (= ծովային մայր): Երկրորդ դեպքում առկա է ճիշտ պահպանված հնչյունական փոխանցումը,

1. Капанцян Гр. Историко-лингвистические работы, II Ер. 1975, ц. 295-296, прим.1.
2.Նույն տեղում, էջ 296, ծամ. 2:
3. Նույն տեղում:
4. Նույ տեղում, էջ 297:
5. Նույն տեղում
6. Հավանական է, որ Վանա լճի հարավային կողմում գտնվող Վասպուրական աշխարհի Նարեկ (Նառ, Նար, Նարա, Նարի, Նոր, Նորեկք)[տես Թ. Խ. Հակոբյան, Ստ. Մելիք- Բախշյան, Հ. Խ.
Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանուններիբառարան, հ. 3, Ե., 1991, էջ 969] գյուղի անունը ծագումնաբանորեն կապված է Nar աստվածության անվան հետ:
7. Նույն տեղում,էջ 298-299£ Ջրի պաշտամունքի վերապրուկները պահպանվել են այդ աղբյուրներին
(հատկապես հանքային) մատուցվող զոհաբերության և պաշտամունքի արարողություններում (տես Ս. Հարությունյան, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Ե.,2001 էջ 9):
8.*Նարատուսի սահմաններում,«Շոր-գյոլ կոչված վայրում բացված բրոնզի ու երկաթի դարերի դամբարաններում

բայց փոխված նշանակությամբ՝ կայծակ[3]: Ըստ Գ. Ղափանցյանի՝ այդ անցումը հին կրոնական աշխարհայացքի տեսակետից դժվար չէ բացատրել, որտեղ ամպերը և կայծակը հանդիսանում են ծովի (ջրի) ծնունդ: Ամպերով պատված երկինքը, որն իջնում է ցած, ճառագում է և երկիրը ոռոգում ջրով, հեշտությամբ կարող էր ներկայանալ որպես ծովիհրի տարերք, այսինքն՝ երկնային ծովի, իսկ ջրի ոգին կերպարանափոխված ձևով անցել է փայլատակմանը, կայծակին[4] : Գ.Ղափանցյանը նշում է նաև կանացի անուններ՝ Ոսկինար (ոսկե ջրահարս) և Հեղնար, որի առաջին մասը կապված է «հեղեղ» հասկացության հետ: Կարևորվում է այն իրողությունը, որ Nar-ը օգտագործվել է նաև առանձին: Հայերն անձրև կանչելու համար պատրաստում էին կնոջ խրտվիլակ և պտտեցնում փողոցներում: Ըստ ժողովրդական հավատալիքի՝ եթե այդ **Նուրինին** ամռան տոթ ժամանակ ցողեն ջրով, ապա անձրև կգա: Այդ երևույթը պահպանվել է ժողովրդի մոտ տարբեր անվանումներով: Ընդ որում, **Nurin**-ը առաջացած է համարվում ***Narin-**ից, այսինքն՝ **nar-ից** -in ածանցով[5] : Այս տեսակետն ամրապնդվում է լրացուցիչ փաստերով: Հայկական ժողովրդական երգերում կա սիրած կնոջն ուղղված կրկներգ՝ Նար հոյ, Նար հոյ, Նար հոյ ջան, որի մեջ ընկնում էh հնչյունը, բայց միշտ պահպանվում հակառակ դասավորությամբ՝ հոյ Նար (=Մեծ Նար)[6] Փաստերի համեմատությունը ցույց է տալիս, որ ջրի կամ անձրևի պաշտամունքը, ինչպես և գետերի և ծովի (հայ իրականության մեջ՝ լճերի), նաև աղբյուրների պաշտամունքը եղել է և գոյություն ունի հայերի մոտ[7]:

Հարցի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում Գեղամա լճի ափին գտնվող Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի անունը:

հայտնաբերվել են միկարասանի, երկկարասանի և խմբակային թաղումներ: Նորատուսի դամբարաններից գտնվել են բրոնզե գոտի, նետասլաքներ, ապարանջաններ, ուլունքներ, երկաթե դաշույն, կավամաններ ևն՝ (Հայկական սովետական հանրագիտարան, հ.8, Ե., 1982, էջ 375):

9. Петкевич А.В. Водная жертва в русской кулытурной мудрсти

10. Կարծիք կա, որ Էլմայի կրակներ կոչվող երևույթի (Լեռների լուսավորվող կատարներ)հետ է կապված Սևանա լճի Լյուխտինես անունը և Նորատուս գյուղանունը:

11.Նույն տեղում:

12. История древнего мира, Минс-Харверст, 1999, с. 283-284,295:

Դեռևս մ.թ.ա. III-I հազարամյակներում նրա բնակեցված լինելը, որի մասին վկայում են պեղումներից հայտնաբերված նյութերը[8], ինչպես նաև բնակավայրի տեղադրությունը թույլ են տալիս վերականգնել նրա անվան նախնական ձևը՝*Նարատուք (հայց. հոլ. *Նարատուս): Հայտնի է, որ ջրի պաշտամունքի մասն է կազմել ջրին զոհաբերություն կատարելու արարողությունը[9]: Անմեղ աղջիկներին վիճակահանությամբ զոհաբերում էին ջրին, «նշանում» ջրի հետ՝ հանուն առափնյա հողերի բերքատվության: Այստեղից էլ *Նարատուք, այսինքն՝ «ջրահարսների տեղ» անվանումը[10]:

Խնդրի քննության համար ուշադրության արժանի է այն մոտեցումը, որի համաձայն հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն ջրի այդ ոգիների անվանումները կամ նրա աստվածացումն իր պատմա-լեզվաբանական ընկալմամբ, այլև ուրիշ ժողովուրդների, մասնավորապես փոքրասիական և խեթական աշխարհի:

Գ. Ղափանցյանն անդրադառնալով հայկական ջրային տարերքի, ծովի և գետի, ինչպես նաև աղբյուրների Nar աստվածության ծագումնաբանությանը նշում է, որ նրա գենետիկական աղբյուրը աքքադական է (ասսուրա-բաբելական): Համեմատությանհամար նա բերում է ասսուրաբաբելական nār -«գետ» և ջրի աստվածուհի Naru-ի անվանումները: Միևնույն ժամանակ նա հիշատակում է խեթական Nāra աստվածությանը, որի սեռը և գործառույթներն անհայտ են, ինչպես նաև խուրրիական փաստաթղթերում առկա Nāra աստվածության անունը[11]: Ընդ որում, վաստակաշատ գիտնականը փոխառություն է համարում հունական ծովի աստված Ներեյի և Կենտրոնական Ասիայում գտնվող մի քանի լճերի անուններ[12]: Հայտնի է, որ Հայկական բարձրավանդակը հանդիսանում է Առաջավոր Ասիայի գլխավոր գետերի ջրբաժանը: Լեռնաշխարհը հարուստ է նաև լճերով, որոնք ունեն հրաբխային ծագում կամ նախկին ջրային խոշոր ավազանների մնացորդներ են: Անհրաժեշտ է նշել նաև, որ մ.թ.ա. V և մասամբ IV հազարամյակում՝ Միջագետքը եղել է եղեգներով պատած ճահիճների և լճերի երկիր՝ նոսր բնակչությամբ, որը գոյատևելու համար այդ անբարենպաստ վայրերում էր հայտնվել՝ դուրս մղվելով նախալեռներից և տափաստաններից ավելի ուժեղ հակառակորդների կողմից: Միայն III հազարամյակի առաջին դարերում Միջագետքում վերականգնվում է շումերական հասարակության պատմությունը՝ ըստ գրավոր սկզբնաղբյուրների և առարկայական հուշարձանների[13]:

Հետևաբար Nar աստվածության «գենետիկական աղբյուրը» կարող էր լինել միայն Հայկական լեռնաշխարհը, որն ինչպես հայտնի է, կապող օղակ էր հարևան երկրամասերի միջև: